ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋԸՆԹԱՑ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ
ՊԵԴՐՈ ԶԱՐՈԿՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Զարոկյան,

Ի պատասխան Ձեր 12.11.2023թ. գրության՝ տեղեկացվում է, որ Երևան քաղաքի Իսահակյան և Թամանյան փողոցների խաչմերուկում տեղադրված 3.1՝ «Մուտքն արգելվում է», 3.18.1՝ «Աջ շրջադարձն արգելվում է», 3.18.2՝ «Ձախ շրջադարձն արգելվում է», 3.27՝ «Կանգառն արգելվում է» ճանապարհային նշանները և 8.5.4՝ «Գործողության ժամանակ (11.00–24.00)» ցուցանակները ձմեռային ժամանակաշրջանում ժամանակավորապես (մինչև գարուն) փակվում են ծածկոցներով և դադարեցվում է դրանց ազդեցությունը:

Միաժամանակ տեղեկացվում է, որ ծածկոցները կիրառվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 26 հոկտեմբերի 2006 թվականի N 1699-Ն որոշման N 3 հավելվածի 2-րդ գլխի 24-րդ կետի համաձայն՝ ժամանակավոր բնույթ կրող նշանները (շինարարական-նորոգման աշխատանքների, ճանապարհային պայմանների եղանակային յուրահատկությունների, արտակարգ իրավիճակների, տարերային աղետների դեպքում և այլն) պետք է ապամոնտաժվեն դրանց անհրաժեշտությունը ծնող պատճառները վերացվելուց անմիջապես հետո: Նշանները կարող են ժամանակավորապես փակվել հատուկ ծածկոցներով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ